

Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի /գբաղմունքի/ անվանումը	«Ասեղնագործող-ժանեկագործ»
I. Դերը	<p>Ասեղնագործող-ժանեկագործողը հագուստի պատրաստման ձեռնարկություններում, նորաձևության տներում, ուսումնական հաստատություններում, գեղագիտական մշակութային կենտրոններում, տեքստիլ արտադրանքի ձեռնարկություններում, ինչպես նաև անհատական գործունեությամբ զբաղվելիս՝ կատարում է ձեռքով, տարբեր գործիքներով, մեքենայով աշխատանքներ:</p> <p>Ընտրում է նյութեր և պարագաներ, կատարում է էսքիզ և կոմպոզիցիայի կառուցում: Պարզ և բարդ կարատեսակներով, ասեղնագործության և ժանեկագործության տեսակներով, ինչպես նաև համակարգչային ծրագրով ասեղնագործական մեքենայով ստեղծագործում է դեկորատիվ կիրառական արվեստի և գեղարվեստական ձևավորման աշխատանքներ:</p>
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Էսքիզի գծագրում, կոմպոզիցիայի կառուցում, գունային լուծում	
Աշխատանքային գործընթացը	Գծագրական սեղանի եւ անհրաժեշտ պարագաների ընտրություն, էսքիզի մշակում ,նախշերի եւ զարդապատկերների գծագրում, կոմպոզիցիայի կառուցում եւ գունավորում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1.Նախապատրաստական աշխատանքները կատարված են 2.նախշերը և զարդապատկերները գծագրած են, 3.կոմպոզիցիան կառուցված է, 4.գունավորումը կատարված է, 5.էսքիզը կազմած է, 6. էսքիզը մշակված է ասեղնագործության համար:
Խնդիրների բնագավառ 2. Աշխատատեղի, սարքավորումների, գործիքների, պարագաների և նյութերի նախապատրաստում	
Աշխատանքային	Աշխատատեղի պատրաստում, անհրաժեշտ նյութերի,

գործընթացը	գործիքների և սարքավորումների ընտրություն, թերությունների վերացում և անխափան աշխատանքի ապահովում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Աշխատատեղը նախապատրաստված է, 2. անհրաժեշտ նյութերը ընտրված են, 3. գործիքները և պարագաները նախապատրաստված են, 4. համակարգչային ծրագրով ասեղնագործության մեքենան աշխատում է անխափան, 5. անվտանգության կանոնները պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 3. Ասեղնագործության տարբեր տեսակների կատարում</u>	
Աշխատանքային գործընթացը	Ընտրված կարատեսակին համապատասխան էսքիզի մշակում, գործվածքի թելերի եւ անհրաժեշտ պարագաների ընտրություն, էսքիզի փոխանցումը գործվածքին, ընտրված կարատեսակներով աշխատանքի կատարում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. Էսքիզը մշակված է ասեղնագործություն կատարելու համար և փոխանցված է գործվածքին, 2. թելերի համապատասխան գույները ընտրված են, 3. պարզ և բարդ կարատեսակները ընտրված են և ասեղնագործված, 4. ասեղնագործությունը կատարված է անթերի, 5. ասեղնագործությունը համապատասխանում է էսքիզի և գծագրերի պահանջներին, 6. անվտանգության կանոնները պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 4. Ժանեկագործության տեսակների ընտրում և կատարում</u>	
Աշխատանքային գործընթացը	<p>Ժանյակի ընտրված տեսակի համար նյութերի, գործիքների, թելերի եւ գործվածքի ընտրություն, պայմանական նշաններով էսքիզի մշակում :</p> <p>Հիմքով կամ առանց հիմքի ժանյակի համար կուրերի եւ հանգույցների, հաշվարկի եւ միացման եղանակների անթերի կատարում:</p>

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. նախնական էսքիզը, գծագիրը և պայմանական նշանները կազմված են կամ մշակված են, 2. ժանեկագործության ընտրած տեսակի համար անհրաժեշտ թելերը, գործիքները, պարագաները ընտրած են, 3. ժանեկագործության ընտրած տեսակը կատարված է անթերի, 4. համաչափությունը, հաշվարկը և միացման եղանակները պահպանված են, 5. պահպանված են անվտանգության կանոնները:
----------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Խնդիրների բնագավառ 5. Համակարգչային ծրագրով ասեղնագործության մեքենայի նախապատրաստում, դիզայնի մուտքագրում

Աշխատանքային գործընթացը	Համակարգչի միացում , գործարկում , նախատեսված ծրագրի բացում: Դիզայնի մուտքագրում, թելերի գույների եւ նյութերի քանակի ստուգում: Մուտքագրված դիզայնի կատարում:
--------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. համակարգիչը միացված է, 2. համակարգչային ասեղնագործության համար նախատեսված ծրագրային ապահովումը գործարկված է, 3. դիզայնը մուտքագրված է, 4. կույների և գույների քանակը ստուգված է, 5. տարրական նկարը մուտքագրված է, 6. օգտագործված կույների տեսակներով դիզայնը ներկայացված է, 7. անհրաժեշտ նյութերը ընտրված են:
----------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Խնդիրների բնագավառ 6. Համակարգչային ծրագրով ասեղնագործության մեքենայի շահագործում և ասեղնագործության կատարում

Աշխատանքային գործընթացը	Համակարգչային ծրագրով ասեղնագործության մեքենայի միացում, աշխատանքային ռեժիմի կարգավորում, մեքենայի թելում եւ մաքրքի լիցքավորում:Գործվածքի տեսակին համապատասխան կայունացուցիչի եւ ասեղների ընտրություն : Նախատեսված գործվածքի թելերի տեղադրում օղակին եւ ամրացում մեքենայի սարքին:Անհրաժեշտ ռեժիմով մեքենայի շահագործում:
--------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Կատարման չափանիշներ	1. համակարգչային ծրագրով ասեղնագործության մեքենան
----------------------------	---------------------------------------------------

	<p>միացված է,</p> <p>2. մեքենասարքավորման ռեժիմները միացված են,</p> <p>3. պարզագույն նորոգման գործողությունները կատարված են,</p> <p>4. մեքենայի ասեղը թելված է, մաքրքը լիցքավորված,</p> <p>5. գործվածքին համապատասխանող կայունացուցիչը ընտրված է,</p> <p>6. նախապատրաստված նյութերը ամրացված են օղակի մեջ,</p> <p>7. պահպանելով ռեժիմները՝ մեքենասարքավորումը շահագործված է, ասեղնագործությունը կատարված է,</p> <p>8. անվտանգության կանոնները պահպանված են:</p>
Խնդիրների բնագավառ 7. Վերջնամշակման աշխատանքներ և աշխատանքի ձևավորում	
Աշխատանքային գործընթացը	Կատարված աշխատանքի լվացում, օւլայում, արդուկում, ավելորդ թելերի հեռացում: Կատարված աշխատանքների ձևավորում ըստ անհրաժեշտության եւ ըստ ճաշակի:
Կատարման չափանիշներ	<p>1. կատարված աշխատանքը լվացված է, անհրաժեշտության դեպքում՝ օւլայված,</p> <p>2. աշխատանքը արդուկված է,</p> <p>3. ավելորդ թելերը և օժանդակ նյութերը հեռացված են,</p> <p>4. աշխատանքը ձևավորված է, ունի ապրանքային կամ ցուցահանդեսային տեսք:</p>
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Պատասխանատու է կատարված աշխատանքների որակյալ արդյունքի համար, սեփական պարտականությունների պատշաճ կատարման, աշխատանքային կարգապահության, անվտանգության տեխնիկայի պահպանման համար:
IV. Լեզուները	<p>Հայերեն – գերազանց:</p> <p>Օտար լեզու – բավարար:</p>
V. Համակարգիչը	<p>1. Համակարգչային օպերատորության ծրագրեր /Windows, world և այլն/,</p> <p>2. համացանցից օգտվելու ծրագրեր /internet/,</p> <p>3. դիզայնի և գրաֆիկայի ծրագրեր /ըստ անհրաժեշտության/:</p>
VI. Գիտելիքները	1. համաշխարհային և հայկական արվեստի մասին գիտելիքներ,

	<p>2. զարդակիրառական արվեստի տեսակների մասին գիտելիքներ,</p> <p>3. համաշխարհային և հայկական կերպարվեստի մասին գիտելիքներ,</p> <p>4. համաշխարհային և հայկական ասեղնագործության տեսակների մասին գիտելիքներ,</p> <p>5. հայկական ասեղնագործության և ժանյակի պատմության մասին գիտելիքներ,</p> <p>6. Ժամանակակից դիզայնի մասին գիտելիքներ:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>1. աշխատանքի կատարման հերթականությունը որոշելու հմտություն, աշխատանքը կազմակերպելու հմտություն,</p> <p>2. ստեղծագործական աշխատանք կատարելու կարողություն,</p> <p>3. նախագծելու, էսքիզ և գծագիր կազմելու կարողություններ,</p> <p>4. տարբեր կարատեսակներ ասեղնագործելու կարողություն,</p> <p>5. ժանյակների տարբեր տեսակների կատարման կարողություն,</p> <p>6. մասնագիտական տերմինները ճիշտ կիրառելու կարողություն,</p> <p>7. ասեղնագործությունը անթերի կատարելու հմտություն:</p>
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պարտաճանաչություն, կարգապահություն, աշխատասիրություն: Ուշադրություն, դիտողունակություն, համբերություն և ճշտապահություն աշխատանքը կատարելու ժամանակ: Համագործակցելու պատրաստակամություն և հանդուրժողականություն: Հարգանք և հետաքրքրություն ժողովրդական, ավանդական, հայկական ասեղնագործության նկատմամբ: Նորն ընդունելու պատրաստակամություն և հետաքրքրություն ժամանակակից դիզայնի և նորաձևության նկատմամբ: Ստեղծագործական մտածելակերպ և ճաշակ:</p>